ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ

Իմ խօսքը աւելի շուտ հարցադրում է, քան նիւթի հանգամանալից վերլուծութիւն եւ այս իմաստով այն ներըմբռնելի է մեթոդաբանական աւելի լայն տեսադաշտի վրայ: Ինչպէս յայտնի է պատմականութիւնը կամ պատմութեան փիլիսոփայութիւնը, որպէս աշխարհայեացք եւ մեթոդ, ձեւաւորուել է ԺԷ-ԺԸ դարերում, կապուած փորձնական գիտութիւնների զարգացման հետ: Ռուս յայտնի փիլիսոփայ Նիկոլայ Բերդեաեւը գտնում է, որ հին Յունաստանի մտածողութեանն օտար էր պատմականութեան գիտակցումը եւ գիտակցութեան այդ տիպի ծագումը վերագրում է հին հրէական մտածողութեանը, աւելի շօշափելի՝ Դանիէլի մարգարէութեանը: Սակայն այլ է աստուածաշնչեան առասպելը եւ բոլորովին այլ երեւոյթի փորձառական իմացութիւնը, որն առընչւում է նոր ժամանակի մտածողութեանը: Այն դարաշրջաններում, նկատում է փիլիսոփան, երբ մարդկային ոգին ամբողջապէս եւ օրգանապէս գտնւում էր կայուն բիւրեղացած կացութեան մէջ, չէին կարող ծագել պատմական շարժման եւ պատմութեան իմաստի վերաբերեալ փիլիսոփայական հարցեր, ուստի եւ պատմականութեան գիտակցութիւն: Անհրաժեշտ էր, որ պատմական կեանքի եւ մարդկային գիտակցութեան մէջ տեղի ունենար ճեղքումը, երկատումը, ստեղծուի առարկայի եւ ենթակայի հակադրութիւնը, տեղի ունենայ անդրադարձը, որպէսզի սկիզբ առնի պատմականութեան գիտակցութիւնն ու կառուցուի պատմութեան փիլիսոփայութիւնը[1]:

Այստեղից հետեւում է, որ միջնադարի միտքը չի ստեղծել եւ չէր կարող ստեղծել գիտութիւնների պատմութիւն: Վախճանաբանական նախախնամութիւնը, ըստ որի աշխարհը նախաս-

---

1 *Տե՛ս* ԲԵՐԴԵԱԵՒ Ն., Պատմութեան իմաստը, *1990, էջ 5 (ռուս.):*

տեղծ է եւ անփոփոխ, բացառում էր բնութեան եւ հասարակութեան զարգացման օրէնքների գիտական ճանաչումը, պատմութիւնը տակաւին ընկալւում էր որպէս իրերի աշխարհի ժամանակագրութիւն, բայց ոչ երբեք համակարգների աշխարհի գիտակցական համադրութիւն:

Այստեղ է ահա Մխիթարեանների յայտնութիւնը: Նրանք հայ իմացականութիւնը բարձրացրին պատմականութեան ու պատմութեան փիլիսոփայութեան գիտակցմանը, ըստ էութեան գիտականացրին հայ միտքը եւ հիմք դրեցին գիտութիւնների պատմութեանը, յատկապէս աննախադէպ արժէքներ ստեղծելով հայագիտութեան ասպարէզում՝ պատմութիւն, լեզու, մատենագրութիւն, բնագիտութիւն եւ այլն:

Ինքնին ուշագրաւ է, որ մինչեւ Մխիթարեանների գործունէութիւնը հայ գրաւոր մշակոյթն անցել էր շուրջ տասներեք դարի պատմութիւն: Եւ սակայն չի արձանագրուել որեւէ փորձ այն համակարգելու ուղղութեամբ: Զկար եւ չէր կարող լինել նախաձեռնող, քանզի ժամանակի մտածողութեանն անյայտ էր պատմականութեան գաղափարը որպէս իրերի ճանաչման ու ներքին շարժումը կապակցող մեթոդ: Հետազօտական այս նոր մեթոդի հետ է աղերսւում հայ գրականութեան (մատենագրութեան) պատմագրութեան ստեղծումը: Առաջին փորձը Սուքիաս Սոմալեանի «Շրջան Հայաստանի գրականութեան պատմութեան» իտալերէն ձեռնարկն է, որը լոյս է տեսել Վենետիկում 1929 թուականին: Այստեղ հեղինակն առաջին անգամ համակարգում է հայոց բազմադարեան մշակոյթը, ենթարկում այն պատմական պարբերացման, շարադրանքն ուղեկցում բնութագիտական ու մեկնաբանական բնութագրումներով: Ըստ էութեան Սոմալեանը ձեւ տուեց պատմական մի ուրուագծի, որը օրինակ դարձաւ դպրութեան պատմութեան յետագայ փորձերի համար: Նկատի ունեմ Կառլ Նեյմանի «Քննութիւն հայոց գրականութեան» (1836) գերմաներէն ակնարկը եւ Ստեփանոս Նազարեանի «Թռուցիկ հայեացք հայոց գրականութեան պատմութեան վրայ մինչեւ ԺԳ դարի վերջը» (1844) եւ «Տեսութիւն նորագոյն շրջանի հայոց գրականութեան պատմութեան» (1846) ռուսերէն պրակները:

Գրականութեան պատմագրութեան ձեւաւորման ընթացքի նշանակալից երեւոյթներից էր Մխիթարեան միաբան Յովսէփ Գաթըրճեանի «Պատմութիւն մատենագրութեան հայոց» (1851)

աշխատութիւնը: Անաւարտ աշխատութեան այս պրակը, որ կարելի է անուանել գրականութեան ներածութիւն, նորոյթ էր հայ գրականագիտական մտքի պատմութեան մէջ: Հեղինակն այստեղ սահմանում է առարկան, անդրադառնում գրականութեան եւ պատմութեան, գրականութեան եւ իրականութեան փոխյարաբերութեան հարցերին, արծարծում գրականութեան ազգային բնոյթի, ճանաչողական արժէքի եւ տեսական այլ դրոյթներ: «Մարդու մը, ազգի մը, կամ բոլոր մարդկութեան մտաւոր կենացը ձայնաւոր կամ գրաւոր յիշատակարաններուն գումարը նոյն մարդու կամ ազգի կամ ընդհանրապէս մարդկային ազգի մատենագրութիւնը կամ գրագիտութիւնը կ'ունենանք»[2], - այսպէս է Գաթըրճեանը սահմանում մատենագրութեան առարկան:

Իւրաքանչիւր ժողովուրդ իր մատենագրութեան մէջ «սեփական նկարագիրը կը ցուցանէ»: Ինչպէս ազգի պատմութիւնն է, նոյնպէս է եւ նրա մատենագրութիւնը եւ վերջինիս զարգացումը, վերելքներն ու անկումները կախում ունեն «նոյն ազգի քաղաքական անցքերէն ու բարոյականութենէն, ... ուղիղ համեմատութեան մէջ են անոնց հետ»: Սակայն, նկատում է Գաթըրճեանը, հասարակական կեանքում կատարուող արմատական շրջադարձերն ու յեղաբեկումները «անմիջապէս մատենագրութեան մէջ ալ յեղափոխութեան մը միշտ չի բերեր: Այս շատ նիւթապէս մտածել կ'ըլլայ»[3]:

Մատենագրութեան պատմութիւնը Գաթըրճեանը բաժանում է երկու շրջանի՝ բանաւոր եւ գրաւոր: Առաջադրուող գիրքը ընդգրկում է բանաւոր (բանահիւսական) գրականութեան շրջանը: Այստեղ հեղինակն անդրադառնում է հայոց լեզուի ծագման, հայ էթնոսի կազմաւորման ու տեղայնութեան հարցերին, վերլուծում գուսանական երգերը, առասպելներն ու զրոյցները, տողանցում ինքնատիպ ու խորիմաստ դիտարկումներ, որոնք այսօր իսկ պահպանում են իրենց գիտական արժէքը:

Գրականութեան պատմագրութեան յաջորդ խոշոր նուաճումը Գարեգին Զարբհանալեանի «Հայ դպրութեան պատմութիւն» երկհատոր աշխատութիւնն է: Առաջին հատորը՝ «Պատմութիւն հայկական հին դպրութեան» (1865) ընդգրկում է հնագոյն բա-

---

2 ԳԱԹԸՐՃԵԱՆ Ց., Պատմութիւն մատենագրութեան հայոց, էջ 1:

3 Նոյնը, էջ 5:

նաւոր գրականութիւնը եւ Ե-ԺԳ դարերի գրաւոր գրականութիւնը: Երկրորդ հատորը կրում է «Նոր մատենագրութիւն» (1878) խորագիրը եւ ընդգրկում է ԺԴ-ԺԹ դարի 70-ական թուականների գրականութիւնը: Սա հայոց մատենագրութեան պատմութեան առաջին լիակատար ձեռնարկն է:

Կարելի է ասել, որ Զարբհանալեանի աշխատութեամբ ամբողջանում է մատենագրութեան պատմութեան Մխիթարեան դպրոցի մեթոդաբանութիւնը, որն ընդհանուր առմամբ ուղենիշ եղաւ յետագայ բանասէրների համար (Եղիշէ Դուրեան, Յարութիւն Մրմրեան, Ներսէս Անդրիկեան եւ ուրիշներ):

Վերջաբանով ասեմ, որ Մխիթարեան բանասէրները պատմական դպրոցի հետեւորդներ էին: Նրանց ընկալմամբ գրականութիւնը նոյնպիսի պատմական յիշատակարան է, ինչպէս մատենագրութեան միւս ձեւերը եւ գրականութեան պատմութիւնն այլ բան չէ, քան դպրութեան պատմութեան բաղադրիչ:

Մխիթարեանների հայագիտական գործունէութիւնը վեր է ամէն կարգի համեմատութիւնից: Հիմնադիր լինելով գրեթէ բոլոր ասպարէզներում, նրանք ստեղծեցին հայրենագիտութեան մի հազուագիւտ մատենադարան, ուր «հայրենեաց յուշիկները» պատմում են հայ ոգու տիեզերական գոյութեան առասպելը:

ՍԵՐԳԷՅ ՍԱՐԻՆԵԱՆ